



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ,

098435745,

narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 6

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով

համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նարեկ համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հերթական նիստի օրակարգի հետևյալ հարցերը:

1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ին հողամաս օտարելու թույլտվության մասին:

2. Համայնքի սեփականատերերին պարկանող գյուղ.նշանակության հողերի հողատեսքի փոփոխության մասին:

3. Նարեկ համայնքի ավագանու 23 դեկտեմբերի 2015 թվականի N36Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՐ

2. ԳԵԻՐԳՅԱՆ ՊԵՐՃ

3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՄՈ

4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ

5. ՎԱՐՊԱՆՅԱՆ ՍՄԲԱԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ,

098435745,

narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 7

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԶԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> փակ բաժնետիրական ընկերությանը հողամասեր օտարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 20.01.2016թ. N 34-Ս որոշումը, համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Տալ համաձայնություն՝ համայնքի սեփականություն համարվող, Նժդեհի փողոց 27 հասցեում գտնվող 0,01 հա հողամասը (ծածկագիրը 03-063-0137-0024, նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ կապի) ուղղակի վաճառքի ձևով օտարել <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>>փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման ծրագրի իրականացման նպատակով:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 34,200 ՀՀ դրամ:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՒ
2. ԳԵԻՐԳՅԱՆ ՊԵՐՃ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՄՈ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ԿԱՐՂԱՆՅԱՆ ՍՄԲԱԹ

ՀԱՍՏԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ



ԳԱՐՈՒՆԻ ՀԱԿՈՒԲՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ,

098435745,

narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 8

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂ. ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. N 1066-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության << Հողային օրենսգրքի >> պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

Թույլատրել Նարեկ համայնքի ներքոհիշյալ հողի սեփականատերերին կատարելու 0,915 հա գյուղ.նշանակության հողերի հողատեսքի փոփոխություն և զիջել հողի հարկը համապատասխան ժամկետներով:

1. Բարսեղյան Գագիկ- ծածկ./03-063-0103-0005/ 0,515 հա վարելահողը փոխել 0,515 հա դեղձի/4տ/ նորապուրակ այգու:

2. Սուսունյան Հրաչ- ծածկ./03-063-0013-0007/ 0,4 հա խաղողի այգին փոխել 0,4 հա դեղձի/4տ/ նորապուրակ այգու:

Կողմ -5

Ղեմ -0

Ձեռնպահ -0

- 1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ
- 2. ԳԵՒՈՐԳՅԱՆ ՊԵՐՃ
- 3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՄՈ
- 4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ
- 5. ԿԱՐՂԱՅԱՆ ՍՄԱԲԹ

(Handwritten signatures in blue ink)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ,

098435745

, narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 9-Ն

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ N36Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արարատի մարզի մարզպետ Ռ.Աբրահամյանի N1/14/1/63-16 12.01.2016 թվականի գրությունը.

Նարեկ համայնքի ավագանին որոշեց Նարեկ համայնքի ավագանու 23 դեկտեմբերի 2015 թվականի <<Տեղական տուրքերի և վճարների դրույթաչափերի հաստատման մասին >>N36Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը .

1. 5-րդ կետի բ) ենթակետում <<50000 >> թիվը փոխարինել <<150000 >> թվով:

2. 5-րդ կետի դ),ե) ենթակետը,5¹,6-րդ,7-րդ կետերը, 8-րդ կետի դ)ենթակետը,10¹,11-րդ,11¹-րդ կետերը հանել:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՐ
2. ԳԵՒՈՐԳՅԱՆ ՊԵՐԾ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՄՈ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՄԲԱԹ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ